ՈՍԿԵ ԴԻՎԱՆ. ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ N 5 (2014-2015)

VOSKE DIVAN: JOURNAL OF FAIRY TALE STUDIES N 5 (2014-2015)

ВОСКЕ ДИВАН: ЖУРНАЛ ПО СКАЗКОВЕДЕНИЮ N 5 (2014-2015)

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

SUMMARIES

РЕЗЮМЕ

Էսթեր Խեմչյան

ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՐԲՆԱԿԱՆ ՀՈՍՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ամփոփում

Հեքիաթի կառուցվածքի առանձնահատկություններից գլխավորը գերբնական տարրերի և չափազանցության կիրառումն է, որոնց միջոցով ստեղծվում է հեքիաթային այն միջավայրը, որում ապրում և գործում են հեքիաթի հերոսները: Ժամանակի գործոնը նույնպես ենթարկվում է գեղարվեստական հնարանքի և դրվում է հեքիաթի կառուցվածքի հիմքում ժամանակային համակարգի գեղարվեստական ու ֆանտաստիկ պատկերը: Բանագիտության մեջ տարբերակվում է ժամանակի երկու տիպ՝ օբյեկտիվ ժամանակ և սուբյեկտիվ ժամանակ, որը ինքնին գեղարվեստական ժամանակն է: Ըստ այդմ՝ հերոսի՝ ապրած ժամանակը սուբյեկտիվ ժամանակ է և չի համընկնում օբյեկտիվ ժամանակի հետ: Հեքիաթային ժամանակի հարահոսը ինքնին գերբնական երևույթ է և հայ ժողովրդական հեքիաթներում հանդիպում է սյուժետային որոշակի սահմաններում և դրսևորվում է կայուն բանաձևերի միջոցով:

Բանալի բառեր. հեքիաթային ժամանակ, ավանդական բանաձև, ժամանակային բանաձև, ժամանակի գերբնական հոսք, գերբնական երևույթ, պայմանական ժամանակ, ժամանակի միավոր, գեղարվեստական ժամանակ, օբյեկտիվ ժամանակ, սուբյեկտիվ ժամանակ:

Ester Khemchyan

SUPERNATURAL FLOW OF TIME IN ARMENIAN FOLK TALES

summary

The use of supernatural elements and exaggeration is a major fairy tale quality, which helps to structure the fantastic environment in which the tale characters live and act. The time issue is a subject to artistic ingenuity too and is placed at the basis of the structure of the tale. It is an independent and out of reality phenomenon characteristic of the fairy tale. In folkloristics two types of time are differentiated: the objective time and the subjective time that is the artistic time itself. Accordingly, the time of a character's life is subjective time and does not coincide with objective time. The flow of the tale time is a supernatural phenomenon itself. It is found in Armenian folk tales in a specific framework and is expressed through stable formulas.

Key words: fairy-tale time, formula traditional formula, temporal formula, supernatural time flow, supernatural phenomenon, conditional time, time unit, artistic time, objective time, subjective time.

Эстер Хемчян

СВЕРХЪЕСТЕСТВЕННОЕ ТЕЧЕНИЕ ВРЕМЕНИ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ

резюме

Главным из особенностей структуры сказки является применение сверхъестественных элементов и преувеличенности, посредством которых создаётся та сказочная среда, где живут и действуют герои сказки. Фактор времени также подвергается художественной выдумке и ложится в основу структуры сказки. В фольклористике различается два типа времени: объективное время и субъективное время, которое и является художественным временем. Время проживания героя сказки это субъективное время и не совпадает с объективным временем. Поточность сказочного времени - сверхъестественное явление, в армянских народных сказках встречается в конкретных сюжетных пределах и выражается средством устойчивых формул.

Ключевые слова: сказочное время, традиционная формула, временная формула, сверхъестественное течение времени, сверхъестественное явление, условное время, единица времени, художественное время, объективное время, субъективное время

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՃԱԿԱՏԱԳԻՐ ՍԱՀՄԱՆՈՂԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ամփոփում

Հայ ժողովրդական հեքիաթներում զգալի քանակ են կազմում ճակատագրի նախասահմանվածությանը վերաբերող սյուժեները: Որպես նախասահմանող՝ հեքիաթների մեծ մասում հանդես է գալիս անմարդաբնակ վայրում ապրող և մարդկանց ճակատագրերը գրող ալեհեր ծերունին, որը կերպարի հնագույն դրսևորումն է և սերում է հայ հնագույն

Տիր՝ գրի ու դպրության, երազատեսության ու ճակատագրերի աստծուց: Վերջինս, հետագայում ժողովրդական հավատալիքներում հիշատակվում է որպես Գրող՝ ընկալվելով որպես հոգեառ և հանդես բերելով բացառապես բացասական հատկանիշներ: Հեքիաթների այլ տարբերակներում որպես նախասահմանողներ հանդես են գալիս մի շարք այլ անձնավորումներ. ճակատագրի հրեշտակները, հոգեառ հրեշտակը, կախարդը, դերվիշը, գուշակը: Վերջին տասնամյակում գրառված ութ նոր տարբերակներում պահպանվել են նախասահմանողի կերպարի ինչպես վաղնջական, այնպես էլ հիշյալ՝ համեմատաբար նոր անձնավորումները:

Բանալի բառեր. *հայ ժողովրդական հեքիաթներ, ճակատագրի նախասահմանվածություն, գրող ալեհեր ծերունի, ճակատագրի աստվածներ, Տիր, Գրող, հոգեառ, ճակատագրի հրեշտակներ, գուշակներ:*

NVARD VARDANYAN

PERSONIFICATION OF THE PREDESTINATOR IN ARMENIAN FOLK TALES

summary

There is a large amount of Armenian folk tale versions about human destiny. In most versions the predictor is an old man, who lives in a remote place and presides over the birth and death of humans. This personage goes back to the ancient Armenian god of writing, dreams and fate known as Tyre. Later in folk beliefs Tyre is referred to as Grogh (writer) and is mainly seen as a death spirit. In some versions of folk tales, other embodiments of the predestinator appear as a result of Tyre's transformations. Instances are the two or three angels of destiny, the angel of death, witches, dervishes or fortunetellers. In eight versions of fairy tales recorded in the last ten years both ancient and relatively new personifications of the predictor have been preserved.

***Key words** : Armenian folk tales, tales of predestination, the writing old man, gods of fate, Tyre, Grogh, angel of fate, angel of death, fortuneteller.*

НВАРД ВАРДАНЯН

ОЛИЦЕТВОРЕНИЕ ПРЕДОПРЕДЕЛИТЕЛЯ СУДЕБ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ

резюме

В армянских народных сказках очень часто встречаются сюжеты о предопределенной судьбе. В образе предсказателя зачастую представлен седой старик, живущий в глухих краях и записывающий в книге судеб. Образ исходит от древнейшего армянского бога письменности, сновидений и судьбы Тира. Впоследствии в народных верованиях Тир упоминается как *Грох* /пишуший/, воплощая исключительно отрицательные черты, как дух смерти. В других вариантах сказки в образе предопределителя судеб упоминаются другие олицетворения образа, появившиеся вследствие трансформации образа, такие как два или три ангела судьбы, ангел смерти, колдун, дервиш, гадальщики и так далее. В восьми новых вариантах сказки, записанных за последние 10 лет, сохранились как древнейшие проявления образа, так и упомянутые выше сравнительно новые олицетворения предсказателя судьбы.

***Ключевые слова:** Армянские народные сказки, сказки о предопределенной судьбе, пишущий седой старик, боги судьбы, Тир, Грох, ангелы судьбы, ангел смерти, гадальщики.*

Հայկ Համբարձումյան

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԴԵՎ-ՊԱՌԱՎՆԵՐՆ ՈՒ ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱԿԱԼ ԱՎԴԱԼԸ

ափոփում

«Սասնա ծռեր» էպոսի մի շարք պատումներում իրացվում են հայկական ժողովրդական հեքիաթներում տարածված դև-պառավների հետ կապված մոտիվներ: Պատումներում Փոքր Միհրը դաժան հաշվեհարդար է տեսնում իրեն հորից հանող, վրիժառու պառավների, նաև իր հարսնացու Գոհարի մոր նկատմամբ: Այդ պառավների արտաքինի բնութագրական առանձնահատկությունը՝ ուսերին գցված ստինքներն են, ինչը հիշեցնում է կովկասյան որսորդական առասպելների և ժողովրդական հեքիաթների որոշ հերոսուհիների: Թեև հնարավոր է ենթադրել, որ դև-պառավների հետ կապված մոտիվները հեքիաթների հետ ժանրային փոխազդեցության արտահայտություն են, սակայն պատումների համեմատական քննությունը, Ավդալ անունով հերոսի հետ կապված մոտիվների վերհանումը, հնարավորություն են տալիս պնդել, որ այդ հերոսներն ու նրանց հետ կապված մոտիվները համակարգային բնույթ ունեն: Դիտարկելի են կովկասյան որսորդական առասպելաբանության հետ որոշակի ընդհանրություններ ու հնարավոր առնչություններ:

Բանալի բառեր. մոտիվ, որսորդական առասպելներ, ժանրային փոխազդեցություն, համեմատական քննություն, էպոս, պատում:

Hayk Hambardzumyan

THE OLD WOMEN OF THE EPIC *DAREDEVILS OF SASSOUN* AND THE FAIRY TALES AND THE LORD OF WILD NATURE AVDAL

summary

The motifs of the old ogress are developed in many variants of the epic *Daredevils of Sassoun*. In a number of versions Poqr Mher, the hero of the epic kills the old woman who has helped him out of the pit, wants to take revenge on him or wishes to marry him to her daughter. Some of these ogresses have their breasts thrown over their shoulders. This description reminds the heroines of Caucasian hunting myths and fairy tales. Also in some variants of the epic, in relevant episodes instead of the old women we see the hero named Avdal. Avdal has functions of the lord of wild forests and animals. These motifs allow us to assume a connection between the mentioned characters. In addition we can think about parallels between our epic and fairy tales and the mythology of hunting.
Key words: motif, hunting myths, generic influence, comparative study, epic, telling.

Айк Амбарцумян

СТАРУХИ-ЛЮДОЕДКИ ЭПОСА «САСНА ЦРЕР»
И НАРОДНЫХ СКАЗОК И ПОВЕЛИТЕЛЬ
ДИКОЙ ПРИРОДЫ АВДАЛ

резюме

Во многих вариантах эпоса «Сасна Црер» («Сасунские удальцы»), как и в эпических текстах многих народов реализуются мотивы старух-людоедок. Герой Мгер Младший в вариантах эпоса по разным причинам убивает старушек, которые помогают ему выйти из ямы, хотят мстить за убитых сыновей или хотят женить его на своих дочерях. Характерной особенностью

внешности этих женщин являются откинутые за плечи груди. Этот признак напоминает героинь кавказских охотничьих мифов и сказок. В некоторых вариантах эпоса, в одних и тех же эпизодах вместо старух мы видим героя, которого зовут Авдал. В кавказских охотничьих мифах Авдал имеет функции повелителя или хозяина диких животных и лесов. Эти мотивы позволяют предположить связь между персонажами. Также, можно предполагать некоторые параллели наших эпических мотивов и сказок с мифологией охоты.

Ключевые слова: мотив, охотничьи мифы, межжанровое взаимодейстие, сравнительное изучение, эпос, варианты.

ԱԼՎԱՐԴ ՁԻՎԱՆՅԱՆ

ԲՈՒՍԵՂԵՆ ՀՈՂԵՂԵՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՈՒՄ

ամփոփում

Հրաշապատում հեքիաթում բուսեղեն և հողեղեն աշխարհների փոխառնչությունն արտահայտվում է այս տիրույթների մերձեցման և հնարավոր միավորման միջոցով: Հրաշապատում հեքիաթը, ինչպես նաև հրաշապատում այլ ժանրեր ձևավորվում են տեսակների «փոխներթափանցման» հաշվին՝ տրանսֆորմիզմի՝ փոխարկելիության սկզբունքով: Կախված փոխներթափանցման բնույթից ու աստիճանից՝ ստեղծում է կերպարների մի ողջ համակարգ: Մարդ բույս գերբնական կապը ոճագիտության մակարդակում կարելի է դիտել, որպես այլաբերականության չեզոքացման, տրոպների բառացի ընկալման բացառիկ արդյունք: Մյուս կողմից, վաղնջական մտածողության մակարդակում գերբնականի տարբեր դրսևորումները չեն բացառում դրանց

այլաբերական մեկնության հնարավորությունը, ինչպես արվում է հոգեվերլուծական ընթերցումներում:

Բանալի բառեր. փոխարկելիություն, գերբնական կապ, ոճագիտական մակարդակ, փոխաբերական մեկնություն, հոգեվերլուծական ընթերցում, վաղնջական մտածողություն, կերպարների անձնակազմ:

ALVARD JIVANYAN

THE RELATIONSHIP BETWEEN HUMANS

AND PLANTS IN FAIRY TALES

summary

In fairy tales the relationship between humans and plants is often expressed through their proximity and possible union. To a certain extent the fairy tale, like other fantasy genres, shapes at the expense of the mutual penetration of the species. Depending on the nature and the extent of this interpenetration a whole personnel of supernatural creatures is created. On the level of rhetoric the relations between humans and plants can be seen as a result of the neutralization of figurativeness and literary understanding of tropes. On the other hand, the various manifestations of the supernatural may also be interpreted metaphorically, as is done in psychoanalytical readings of the tales.

Key words: transformism, level of stylistics, metaphorical interpretation, psychoanalytical reading, archaic thought, personnel of supernatural characters.

АЛВАРД ДЖИВАНЯН

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ ЛЮДЬМИ И РАСТЕНИЯМИ

В ВОЛШЕБНОЙ СКАЗКЕ

резюме

В волшебной сказке взаимоотношения мира людей с растительным миром выражается их близостью и возможным единением. В какой то степени волшебная сказка, как и другие фантастические жанры формируются засчет пересмотра научной ботаники и допущения трансформации видов. В зависимости от природы и степени трансформации формируется целая система сверхъестественных персонажей. На уровне риторики взаимоотношения между людьми и растениями можно оценить как уникальный результат нейтрализации фигурального значения и дословного понимания тропов. С другой стороны, различные проявления сверхъестественного можно интерпретировать метафорически, как это делается, в психоаналитических толкованиях волшебных сказок.

Ключевые слова: *трансформизм, уровень стилистики, метафорическая интерпретация, психоаналитическое толкование, архаическое мышление, система персонажей.*

Հասմիկ Մատիկյան

ՔՆԱՄՈՒՏԻ ՏԵՔՍՏԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԺԱՆՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ամփոփում

Հոդվածում փորձել ենք մանկական բանահյուսական տեքստերը խմբավորել ըստ վերջիններիս կիրառական գործառույթի՝ առանձնացնելով մանկան խնամքի՝ լոգանքի, քայլքի տեքստեր, քնամուտի տեքստեր՝ օրորոցային, աղոթք, հեքիաթ և մանկախաղաց տեքստեր՝ հաշվերգեր, խաղերգեր և այլն: Ժանրային ներթափանցումը վերոնշյալ տեքստերում բնական և կանխատեսելի երևույթ է, քանի որ բոլոր երեք խմբերի

տեքստերի հասցեատերը երեխան է: Վերը նշված տեքստերի տեսակները կարող են ունենալ կերպարային, թեմատիկ, գործառութային ընդհանրություններ և տարբերություններ:

Բանալի բառեր՝ *մանկական բանահյուսություն, օրորոցային, հաշվերգ, անձնավորում, հասցեատեր, երեխա, գործառութային ընհանրություն:*

Hasmik Matikyan

BEDTIME TEXTS IN THE CONTEXT OF OTHER GENRES OF CHILDREN'S FOLKLORE

summary

We have tried to classify the wide range of Armenian and English texts of children's folklore according to their function, choosing out texts of childcare and counting rhymes. Within the first group we can easily single out a subgroup of texts that can be characterized as bedtime texts: lullabies, prayers, fairy-tales. The generic interpenetration of the above-mentioned texts is expected as in all cases the child is the addressee. The above-mentioned text types have commonalities on character level, as well as on thematic and functional levels.

Key words: children's folklore, lullaby, counting-out rhyme, personification, addressee, child, functional affinity.

Асмик Матикян

ПРЕДСОННЫЕ ТЕКСТЫ В КОНТЕКСТЕ ДРУГИХ

ЖАНРОВ ДЕТСКОГО ФОЛЬКЛОРА

резюме

В статье *сделана* попытка функциональной *классификации* текстов детского фольклора. В первую группу входят тексты с тематикой об уходе за ребенком: купание, первые шаги и т.д., в особую подгруппу входят тексты, которые можно охарактеризовать как предсонные (колыбельные, молитвы, сказки). Выделяется также группа игровых текстов: считалки, стишки и т.д. В вышеуказанных текстах жанровые пересечения вполне предсказуемы, поскольку у всех текстов единый адресат – ребенок. Данные тексты детского фольклора могут иметь образные, тематические и функциональные особенности, сходства и различия.

Ключевые слова: детский фольклор, колыбельная, считалка, персонификация, адресат, ребенок, тематическая классификация, функциональное сходство.

Թամար Հայրապետյան

ԱՄԱՆՈՐ ԵՎ ՎԱՆԱՏՈՒՐ ԴԻՑԱԶՈՒՅԳԸ ԻԲՐԵՎ ՆՈՐԱՊՏՂԻ ԾՊՏՑԱԼ ՀՈՎԱՆԱՎՈՐ

ամփոփում

Հայ ժողովրդական բանահյուսության և կրոնապատմական ավանդության մեջ պահպանվել են հիշողություններ, որոնք վերաբերում են հին նոր տարվա Ամանոր աստվածությանը և նրան զուգակցված Վանատուրին ու համադրվում են փթթող բուսականության ու նորահաս պտուղների պաշտամունքին, որը տոնվում էր Նավասարդին: Հայոց մեջ ժողովրդական

տարբեր տոներին բերքի օրհնության և նվիրաբերման ծեսեր էին կատարվում: Հոդվածում քննվում են այն հեքիաթները, որոնցում պահպանվել են նշված պաշտամունքային մոտիվները:

Բանալի բառեր. հեքիաթ, պաշտամունք, Ամանոր և Վանատուր, զոհաբերություն, նորահաս պտուղ, հովանավոր:

Tamar Hayrapetyan

AMANOR AND VANATOUR AS DISGUISED

PATRONS OF THE NEW CROP

summary

Armenian folklore and historical-religious traditions have preserved memories related to Armenian pagan deities Amanor and Vanatour who were believed to be the patrons of the new crop and fruit. Festivals dedicated to these deities were celebrated on Navasard (Armenian Pagan New Year). Various symbolical fruit and flower offerings were made. This tradition, although transformed can be traced in folk literature. The article dwells upon motifs in which elements of pagan deity worship have been preserved.

Key words: folktales, patrons, Amanor and Vanatour, pagan tradition, deity worship, fruit offerings.

Тамар Айрапетян

АМАНОР И ВАНАТУР КАК ТАЙНЫЕ ПОКРОВИТЕЛИ

МОЛОДОГО ПЛОДА

резюме

В армянской фольклорной и религиозной традиции сохранились сведения, касающиеся дохристианских божеств старого нового года Аманора и Ванатура, которые считались покровителями культа цветущей растительности и молодого плода. Празднества в их честь проводились в новый год – в Навасард. Различные символические цветы и плоды приносились в жертву покровителям растительности. В фольклорной традиции, в частности в сказках, сохранились пережитки данной традиции. Статья исследует мотивы армянской народной сказки, в которых сохранились следы этих языческих традиций.

Ключевые слова: фольклорная сказка, покровители, Аманор и Ванатур, молодой плод, культ, жертвоприношение.

Եվա Զաքարյան

ԵՐԿՎՈՐՅԱԿԱՅԻՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ամփոփում

Հայ բանագիտության մեջ լայնորեն լուսաբանված երկվորյակային թեման շրջանցել է հեքիաթային նյութը: Երկվորյակային առասպելների հիմքում ընկած է երկակիության գաղափարը, աշխարհընկալման երկհակադրական միասնության սկզբունքը: Սույն հոդվածը անդրադարձ է երկվորյակային առասպելների մոտիվներով հեքիաթներին, տրված են դրանց տարաբնույթ դրսևորումները, առանձնահատկություններն ու ընդհանրությունները այդ մոտիվները կրող բանահյուսական այլ ստեղծագործությունների հետ:

Բանալի բառեր՝ գերբնական ծնունդ, արքայական ծագում, մշակութային հերոսներ, զույգ եղբայրներ, նույնասեռ երկվորյակներ, տարասեռ

երկվորյակներ, հերոսը և կրկնակը, դերվիշի խնձոր, հայրասպանություն, հակադիր սկզբունքներ:

Eva Zakaryan

MANIFESTATIONS OF MYTHICAL TWINS

IN ARMENIAN FOLKTALES

summary

The issue of twins in myths, widely discussed in Armenian folklore, is hardly ever considered in the context of folktales. Twins represent the dualistic nature of the universe. The current article deals with the motif of mythical twins in the context of Armenian folktales. Possible manifestations of the motif, their interpretation and peculiarities are taken into consideration. The article also focuses on a comparative analysis of the characteristic features of this motif in folktales and other folk narratives.

Key words: miraculous birth, royal origin, culture heroes, twin brothers, same-sex/opposite-sex twins, hero and his double, dervish's apple, parricide, opposite principles.

Ева Закарян

ПРОЯВЛЕНИЯ БЛИЗНЕЧНЫХ МИФОВ В АРМЯНСКИХ СКАЗКАХ

резюме

Хотя Тема близнечных мифов широко исследована в армянской фольклористике, в контексте народной сказки она практически не изучена. В основу близнечных мифов лежит идея о дуалистичной сущности мировосприятия. В данной статье рассматривается мотив близнечных мифов в армянской народной сказке, раскрываются различные формы проявления данного мотива в сказке и его особенности, а также, сопоставляются общие характерные признаки мотива близнечных мифов в сказке и в других фольклорных произведениях.

Ключевые слова: чудесное рождение, королевское происхождение, культурные герои, братья близнецы, однополые/разнополые близнецы, герой и двойник, яблоко дервиша, отцеубийство, противоположные принципы.

Գոհար Մելիքյան

ՀՐԱՇՔ ԾՆՆԴԻ ՄՈՏԻՎԸ ՀԵՔԻԱԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ամփոփում

Հրաշք ծննդի մոտիվը տարածված է համաշխարհային բանահյուսությունում, մասնավորապես հեքիաթում: Հեքիաթներում հերոսը ծնվում է կերած խնձորից, արևի շողից, ծաղկի բույրից, կամ այլ առարկաներից (քարից, ծառից, պտղից), որոնք ինչ-որ կերպ հայտնվում են կնոջ որովայնում: Կինն ուտում է բացառապես այն պտուղները, որոնք ենթագիտակցորեն ասոցացվում են արգանդի հետ: Հրաշապատում հեքիաթում հերոսները հաճախ ծնվում են ջրից, որ կենսական ամենահզոր և ունիվերսալ խորհրդանիշներից է: Հեքիաթի համատեքստում այն հաճախ հանդես է գալիս որպես կյանքի խորհրդանիշ (անմահական ջուր):

Բանալի բառեր ՝ գերբնական/ հրաշք ծնունդ, հեքիաթ, բեղնավորում, կյանքի խորհրդանիշ, ջուր:

Gohar Melikyan

MOTIF OF MIRACULOUS BIRTH IN THE CONTEXT OF FOLKTALES

Summary

The motif of miraculous birth current in folklore is common in the context of folktales too. Tales of miracle births may include conception by miraculous events such as interference of supernatural elements. In folktales the hero is conceived from an apple, sunlight, smell of flowers, water or inanimate objects (stone, tree, fruit) consumed by a woman. She eats fruits, which may subconsciously be associated with the womb. Water is another source of miraculous birth. The motifs of unusual birth were developed through centuries and penetrated from one folklore genre into another taking different forms and adding new layers of semantics.

Key words: miraculous birth, folktale, conception, life symbol, water.

Гоар Меликян

МОТИВ ЧУДЕСНОГО РОЖДЕНИЯ В КОНТЕКСТЕ СКАЗКИ

резюме

Мотив чудесного рождения героя распространенный в мировой фольклористике, часто встречается и в народной сказке. Под термином "чудесное рождение" традиционно воспринимаются два процесса: собственно зачатие и возникновение ребенка из различных реалий. В сказках герой рождается от съеденного яблока, от солнечного света, запаха цветов, воды, постороннего неодушевленного предмета (камня, дерева, плода), попавшего в тело женщины. Женщины едят исключительно те плоды, которые могут подсознательно ассоциироваться с чревом, с плодом внутри оболочки. Часты случаи зачатия героя от воды. Символика воды входит в систему самых сильных знаков. Вода рассматривается как всеобъемлющий

символ, содержащий в себе возможности всякого бытия.

Ключевые слова: чудесное рождение, фольклорная сказка, зачатие, символ жизни, вода.